ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

**Դիտորդ մարմնի կազմը**

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի՝ 2024թ. հունվարի 23-ին ՀՌՀ նիստից հետո լրագրողի հետ շփման ժամանակ դրսեւորած վարքագծի վերաբերյալ լրագրող Լիա Սարգսյանի դիմումի առնչությամբ:

## Ա. ՓԱՍՏԵՐ

- 2024թ. հունվարի 29-ին Դիտորդ մարմին է դիմել լրագրող Լիա Սարգսյանը՝ տեղեկացնելով, որ հունվարի 23-ին Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նիստի ավարտից հետո փորձել է հարցազրույց անել ՀՌՀ անդամ Արթուր Մանուկյանի հետ: Այդ պահին նրան է մոտեցել ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյանը եւ իմանալով, որ Սարգսյանը ներկայացնում է «Հրապարակ» օրաթերթը, Արթուր Մանուկյանին արգելել է հարցազրույց տալ: Այնուհետեւ, ըստ դիմումատուի, Տիգրան Հակոբյանն սկսել է բղավել՝ ասելով, մասնավորապես, «դուք լրագրող չեք… ձեզ ով է խաբել, որ դուք լրագրող եք… դուք խուժան լրատվամիջոց եք… շատ հաճելի կին եք, զբաղվեք ձեր աշխատանքով… սիրուն դեմքով եկել է ու սկսում է սադրել»:

- Լիա Սարգսյանն իր դիմումի մեջ ներկայացրել է նկարագրված դեպքի տեսանյութը եւ խնդրել է ԴՄ-ին՝ ուսումնասիրել դեպքն ու գնահատական տալ Տիգրան Հակոբյանի վարքին: Լիա Սարգսանը շեշտել է, որ Դիտորդ մարմնին է դիմել որպես լրագրող եւ այդ գործողության համար իր գործատուից՝ «Հրապարակի» ղեկավարությունից լիազորություն կամ հանձնարարություն չի ստացել:

- Դիտորդ մարմինը, քննության առնելով Լիա Սարգսյանի բողոքը, պարզաբանումների համար դիմել է ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյանին: Վերջինս մասնավորապես նշել է, որ ռուսաստանյան պետական «Սպուտնիկ-Արմենիա»-ի հեռարձակող «Տոսպա» ռադիոընկերության լիցենզիայի կասեցման որոշումը կայացնելու շրջանում ՀՌՀ անդամները եւ հատկապես ինքը՝ Հակոբյանը, լարվածության մեջ են եղել եւ փորձել են դիմագրավել տարատեսակ ճնշումների: Միեւնույն

ժամանակ, ըստ ՀՌՀ նախագահի, հայաստանյան որոշ ԶԼՄ-ներ եւս, այդ թվում «Հրապարակ» օրաթերթը, փորձել են է՛լ ավելի լարել վիճակը՝ ՀՌՀ-ին մեղադրելով «հակառուսականության» համար, օրաթերթում մի քանի հոդվածներ են հրապարակվել, որոնք անհիմն պնդումներ ու վիրավորանքներ են պարունակել անձամբ Հակոբյանի եւ նրա ղեկավարած կառույցի հասցեին:

- Տիգրան Հակոբյանը ԴՄ-ին է ներկայացրել համապատասխան մեջբերումներ իր հիշատակած հոդվածներից՝ դրանցով պայմանավորելով իր վերաբերմունքը «Հրապարակի» նկատմամբ: Այնուհետեւ, հունվարի 23-ից՝ նկարագրված դեպքից հետո թերթը, Հակոբյանի ձեւակերպմամբ, «վակխանալիա» է կազմակերպել իր դեմ՝ դրանով իսկ ամրապնդելով իր եւ իր գործընկերների կարծիքը «Հրապարակ» օրաթերթի մասին:

- Տիգրան Հակոբյանը նշել է, որ ընկերոջ իրավունքով թույլ չի տվել, որ ՀՌՀ անդամ Արթուր Մանուկյանը հարցազրույց տա «Հրապարակի» լրագրողին:

## Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

### ՀՀ Սահմանադրություն

Հոդված 29. Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

### «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք

**Հոդված 21. 1.** Բարեվարքության համակարգը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները եւ դրանցից բխող վարքագծի կանոնները:
**Հոդված 25. 1.** Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները դրսեւորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսեւորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:

### «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

**Հոդված 4. 1.** Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա: Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
**Հոդված 8.** 1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող

փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

**«Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք**

**Հոդված 6. Մաս 1.** Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի եւ անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է:

**Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

**6.1.** [Խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են] աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:
**6.3.** Ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

**ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ**

**4.10.** ԴՄ-ն քննության է առնում տեղեկատվության ոլորտում պաշտոնապես գործունեություն իրականացնողների մասնակցությամբ տեղեկատվական վեճերը եւ ըստ անհրաժեշտության հանդես է գալիս հայտարարությամբ կամ պատրաստում եւ հրապարակում է փորձագիտական կարծիք:

## Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

- «Հրապարակ» օրաթերթը նախկինում հայտնել է, որ ցանկություն չունի առնչություն ունենալ ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության եւ Դիտորդ մարմնի հետ: Այդուհանդերձ, Դիտորդ մարմինը քննության է առել իր մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդրի մասին բարձրաձայնող Լիա Սարգսյանի դիմումը՝ դիտարկելով այն որպես սոսկ լրագրողի անհատական, ոչ թե որեւէ կոնկրետ լրատվամիջոցի ներկայացուցչի դիմում եւ,

- ուսումնասիրելով ՀՀ օրենսդրությունը, միջազգային իրավունքի՝ դեպքին վերաբերելի հանրահայտ նորմերը եւ Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրով սահմանված նորմերը,

- կարեւորելով պետական կառույցների ներկայացուցիչների եւ լրագրողների միջեւ փոխադարձ հարգանքի եւ կառուցողական համագործակցության վրա հիմնված հարաբերությունները,

- վերլուծելով դիմումատուի ներկայացրած տեսանյութը, ինչպես նաեւ ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյանի պարզաբանումներն ու կից ներկայացված, «Հրապարակ» օրաթերթում լույս տեսած

հոդվածները, ինչպես նաեւ միջադեպին ներկա ՀՌՀ այլ ներկայացուցիչների մեկնաբանությունները,

**Արձանագրում է, որ**

- Տիգրան Հակոբյանը հնարավորություն է ունեցել պաշտպանելու իր անձը եւ իր ղեկավարած կառույցի բարի համբավը հրապարակային վիրավորանքից եւ զրպարտությունից՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտադատական եւ/կամ դատական միջոցներով, մասնավորապես, օգտվելով հերքման եւ պատասխանի իրավունքից։

- «Հրապարակում» լույս տեսած՝ քննարկվող հոդվածների առաջացրած վրդովմունքը չի արդարացնում ՀՌՀ նախագահի անզուսպ պահվածքը եւ խտրականության տարրեր պարունակող արտահայտություններն անձամբ Լիա Սարգսյանի հասցեին, մանավանդ որ, այդ լրագրողի նախորդ հրապարակումները դրա առիթը չէին տվել։

- Միջադեպի ժամանակ Լիա Սարգսյանը դրսեւորել է որոշակի համառություն, որի անհրաժեշտությունը պրոֆեսիոնալ տեսանկյունից գուցե քննարկման առարկա է։ Ամեն դեպքում, դա չպետք է հիմք դառնար հանրային բարձր պաշտոն զբաղեցնող անձի կողմից էթիկական կանոնների, ինչպես նաեւ՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի (բարեկիրթ վերաբերմունք դրսեւորել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս) խախտման։

- ՀՌՀ անդամ Արթուր Մանուկյանից հարցազրույց վերցնելու փորձի դրվագի վերաբերյալ եւ հնարավոր նման իրավիճակներում ցանկալի է, որ լրագրողների հետ շփումներում ՀՌՀ անդամները ղեկավարվեն հանրային հաղորդակցության հստակ (փաստաթղթավորված) կանոններով, որոնց մշակումը եւ կիրառումը արդիական անհրաժեշտություն է։

- Զգացմունքային պոռթկման համար ՀՌՀ նախագահի հրապարակային ափսոսանքը կարող էր դառնալ միջադեպի լավագույն լուծում՝ միաժամանակ լավ օրինակ ծառայելով այլ պետական պաշտոնյաների համար եւ կկանխեր վեճի հետագա խորացումը հրապարակային տիրույթում։

- Դիտորդ մարմինը հույս է հայտնում, որ հանրային հաղորդակցության ոլորտում ՀՀ պետական կառույցների ներկայացուցիչների համար միջադեպը եւ սույն փորձագիտական կարծիքը համապատասխան հետեւությունների առիթ կդառնան։

**Դ. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔՆԵՐ**

- Դիտորդ մարմնի անդամներից երկուսը բողոքի վերաբերյալ հատուկ կարծիք են արտահայտել։ Նրանցից մեկը կարծում է, որ գործը չպետք է վարույթ ընդունվեր, քանի որ լրագրողը, անկախ նրանից, որ բողոքը ներկայացրել է իր անունից՝ առանց լրատվամիջոցի ղեկավարության հետ համաձայնեցնելու,

այդուհանդերձ, հունվարի 23-ի ՀՌՀ նիստը լուսաբանելու է գործուղվել «Հրապարակ» օրաթերթի կողմից, որը սկզբունքորեն չի ընդունում ԴՄ գործունեությունը եւ հրապարակայնորեն արտահայտել է այդ դիրքորոշումը։ Հետեւաբար, ըստ հատուկ կարծիքի, «Հրապարակի» լրագրողի բողոքի քննությունը որեւէ դրական նշանակություն կամ կարեւորություն չի կարող ունենալ այդ լրատվամիջոցի համար։

- Դիտորդ մարմնի մյուս անդամը, որը հատուկ կարծիք է արտահայտել, նույնպես համարում է, որ բողոքը չպետք է քննվեր։

**Ընդունվել է 2024 թ. մարտի 11-ին,**
**ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով**

**Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
**Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ**
ռեժիսոր, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր
**Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
**Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
**Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ**
Երեւանի մամուլի ակումբի մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
**Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
«ԳԱԼԱ» ՀԸ գործադիր տնօրեն
**Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ**
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ
**Արա ՇԻՐԻՆՅԱՆ**
Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ
**Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
**ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ**
Իրավաբան
**Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ**
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
**Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ**
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր
**Նունե ՍԱՐԳՍՅԱՆ**
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
**Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ**
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

*ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 76-ն են։ ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների*

*էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում:*